

թէ և ինչպէս որ ըսկնք քրիստոնէից մէջ ալ դեռ ևս կը գտնուի, այլ աւելի յաճախ հաստատութիւն ունի ուամիկ տաճկաց մէջ, որոնք թերեւս աշքով տեսածնուն այնչափ չեն հաւտար, ինչպէս այնպիսի խարէական երևակայութեան. ինչպէս է նա և տաճիկ մեռելոց հոգեքչութեան հաւատաքը, որուն ամենայն հաստատութեամբ կը հաւտան, և դիւցազնական կտրնութեանց կարգ կը սեպեն գիշեր ժամանակ տաճիկ գերեղմանոցէ մը անցնելը: Բայց ինչպէս որ կանխաւ ըսկնք, սկսեր է այս կողմերն ալ աստիճան մը լուսաւորութիւն, և երթարով այս աւելարդապաշտութիւնք ալ կ'անհետանան:

Խոտրջուրցիք որչափ ալ երկշոտ են սովորաբար բնութեամբ, բայց իրենց մէջ ալ պտկաս չեն մեծասիրա և յանդուգն անձինք, թէ չորս կողմերը եղած աւազակաց դէմ գնելու համար, և թէ մեծամեծ որսական վտանգներու մէջ ձգել ինքզինքնին. ինչպէս յիշատակի արժանաւոր է մեզի ժամանակակից ձանիկեան երկաթագործ Սերովքէն. որ իր արուեստին մէջ, տեղոյն համեմատ, շատ մեծ անուն հանելէն զատ, խիստ ճարտար որսորդ ալ է անդամ մը մէկ գիշերուան մէջ՝ երեք արջ սպաննած է մի և նոյն տեղը. շատ անդամ աւազակներու ետևէն ինկած և անոնց մէկ քանին ալ մեռուցած:

Իր շարունակուի.

## Ա.ՐԴԻ ՇԽԱԿԱՑԻՔ Ո.ՈՒՍԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Նախընթաց յօդուածոց մէջ տեսանք Շիրակացւոյն իր նիւթական ապրուստը և կեանքը տպահովցընելու ինքնաբերական խելամութիւնն և ճիգն. տեսնանք արդ թէ նոյն խելամութիւնը և ճգանց ուղղութիւնը ինչ աստիճան կը հասնին իրեն բարոյական կենաց ուղղակի և անուղղակի պահանջմանց մէջ. որ են բնակարսանաց կերպն, գիեստուց տարապը, ընտանեկան կեանք, մանկանց դաստիարակութեան խնամքը, և այլն:

Հայոց ճարտարապետութեան վկայ է Ստրաբոն և հոչչականուն Տրդատ ծանօթ հայ ճարտարապետն. վկայ է և Մանուէլն իր քանդակագործ կրօնաւոր աջակցաւորուն անուան ծանօթութիւնը ծածկուած է բարեպաշտութեան սուրբ քողին ներքեր. որոնց տուաւ գագիկ թագաւոր Արծրունեաց՝ հիմնել, կատարել և զարդարել Սաւրբ խաչ անուանի եկեղեցին Աղթամար կղզւոյն մէջ, նոյն-

պէս գարձեալ մատենագիրք Ասողիկ, թովմա արծրունի և լաստիկերտցի: Եւ որ մեծն է, վկայ են մնացորդք հին ճարտարապետութեան, և արդի նորածաղիկ ազգային ճարտարապետք և հայագրոշչ ճարտարութիւն, որ տիբորդ է աւելի և յայտնագոյն 'ի բուն հայ յատակի վրայ բնակող Հայոց մէջ: Որչափ որ ճարտարապետութեան հետք մը անժխտելի է 'ի Հայս, այնչափ ալ քիչ է կամ ոչինչ 'ի հնոց առ մեզ հասած շնուածոց վրայ ուսուումնական դրութիւն մը գրով կամ բերնով, կամ աւելի բնական գործնական աւանդութեամբ. օրինակի համար չէնքի կերպին վրայ, անոնց ընդհանուր բաժանմանց վրայ, բաժանմանց մասնական անուանց վրայ: Հայը բարբարոս ազգ չէ եղած, ինչպէս ենթագրեր են եւրոպացիք ու մանք, և հայասէրք ալ. այլ երկիրն 'ի ստէպ հալածչաց և գերչաց, միանգամ անկումն արուեստից և 'ի ուամիկն տի-

բացեալ հնապաշտութիւն որ ինչ որ  
տեսած է 'ի հարց՝ չուզեր փոխելոյ մի  
կերպով, ասոնք ամէնք մէկ տեղ եկած  
կ'արգելուն կամ առ հնութիւնն գէթ  
ելլալու կամ նոր քաղաքականութեան  
հնաւելու . այլ միջին աղաւազութիւնն  
և յետամնացութիւնը սիրելու :

Աղդի՝ 'ի բնիկ հայաստանեայս որով  
և 'ի շիրակացիս, Տրդատ մը, Մանուէլ  
մը կանթեղով բնտոելու է . սակայն  
հայկական ճարտար բարբն, անկէ ար-  
դիւնաւորեալ արդասիքն կը սրտապրն-  
դեն զհայասէր խուզարկուն՝ անոնց շըն-  
չին անգամ ճարտարութեան մէջ նշա-  
րել զնշար մննուէկեան, և գուշակել  
զվերածնութիւն Տրդատից մանաւանդ  
թէ հայ հանճարոյն :

Քանի մը տեսակ շէնք ունի շիրակա-  
ցին, որոնք ընդհանուր դրութիւն մը  
չեն կազմեր, այլ շատ բաներով իրար-  
մէ կը զանազանին: Գլխաւոր շէնք տունն  
է, ախոռն, մարագ, ջրաղաց, ձիթե-  
հանք . ձիթեհանքի վրայ իր խրթնու-  
թեան և ծանօթութեանց անբաւակա-  
նութեան պատճառաւ յանձն շառի խօ-  
սելու, ջրաղացին զանազանութիւնն յի-  
շատակուեցաւ, կը մնայ արդ քիչ խօս-  
քով մնացածներն յիշատակել:

Մտաց դիմաց առջի եկողն տունն է .  
բարյական էակաց սկզբնական ան-  
դրագարձ հայելին, յորմէ ցոլանսան ա-  
ռաջին անգամ չար կամ բարի բնական  
իրաց ճառագայթներ՝ անոնց կուսա-  
կան զգացման կարողութեան վրայ ո-  
րով ալ տունն կ'ըլլայ անոնց նախսամարր  
զգացմանց կազմութեան առաջին տե-  
ղին: Այս տան ճարտարապետ, հիմնա-  
գիր, որմնաշէն, յարկած ածուկն շատ  
անգամ բնիկ տէրն է անկարօստ ուրի-  
շի, կամ գեղին և տեղւոյն ճանօթ  
հանճարն՝ վարձով, նշապէս երբեմն փի-  
լիսոփայ ըսելով կ'իմանային ուսումնա-  
կան, չափաբան, քերական, տաղա-  
շափ, բնադէտ և բնախոյզ մարդ մը,  
նոյնպէս հօն որմնաղիրն կամ ըսա տե-  
ղոյն բարբառոյ պատ շարողն ճար-  
տարապետ, է բուն բառին ընդարձակ  
նշանակութեան իմաստով, որով է հիւմն

ալ և հիւմնութեան և որմնաղրութեան  
ամէն տեսակին տեղեակ: Այս ամե-  
նահմուտ ճարտարապետներն ունին ի-  
րենց արուեստին վերբերական պարզ  
գործիներ՝ ծուռն և շիտակն իմանալու,  
քար տաշելու, տիղմանելու ու անով  
քարերն իրարու հետ ամրապինդ զու-  
գելու, փայտն չափելու, կտրելու, տա-  
շելու, յրկելու, և այն . բայց տինուր է  
հայրենասէր և ուսումնական մտաց տե-  
սակը որ յայսմ և յայսպիսիս հայանուն  
գործեաց բառերուն տեղ՝ բնիկ Հայուն  
բերնէն տաճիկ ազաւալ բառեր կ'ելլան,  
զորս և ոչ արժանի կը համարիմ յիշա-  
տակել. կը լսուին և բնիկ հայեցի բա-  
ռեր. ինչպէս սղոց, ուրագ, ուռնու-  
րագ, կացին. ոտնուրագ միայն նորա-  
շէն է . այսպէս կոչուելուն պատճառ  
ուքն փայտին վրան զնելն է, տաշելու  
տաեն, և տաշոյին կանգուն կենալն,  
թէպէտ և ձևովն ալ շատ տարբեր է  
բուն ուրագէն, որու արգէն պաշտօնն  
կը կատարէ մեծամեծ զերանաց վրայ:  
Այսպիսի ճարտարապետաց հիմնած  
և զիշաւորած տուներն, եթէ ոչ բոլորն  
զոնէ մեծաւ մասամբ՝ քառակուսի կամ  
բոլորչի ձիւով են . մեծութեամբ միայն  
յիրաւի սրահի շնորհք ունին, բայց ու-  
րիշ մասամբ և ոչ սրահ անուան ար-  
ժանի են: Հիմնան խորութիւնն մէկ  
մէդր՝ երբեմն թէրևս կիսով չափ աւե-  
լի . հիմնարկ քարինք մեծամեծ ան-  
տաշ որձաքարինք են, որոնց մէկ ծայրն  
կամ միւսն հարկ կ'ըլլայ երբեմն կոտ-  
րել նման քարանց տեղ բանալու կամ  
զետեղելու համար . կ'ընտրեն մասնա-  
ւոր անկիւնակալ քարինք, և սովորա-  
բար անկիւն կազմով պատին վրայ մեծ  
զգուցութիւնն կ'ըլլուի: Երբ հիմն կը  
դրուի կը լմնոյ և անկիւնք կը հաստա-  
տուին, կը սկսի բարձրանալ հիմնան վր-  
րայ երկիրեղի կամ արտաքինն և ներքին  
երկամասնեայ պատ մը էկս մէդր կամ  
քիչ մը աւելի լսյութեամբ . երկու  
կրողմէն կը շարեն և երկիրեղին մէջ կը  
լցցնեն խառն խիճ, հող, տիղմ. վասն  
զի եփած աղիւսի և կղմինդրի գործա-  
ծութիւն գեռ նոր և անսովոր է : Այս-

պէս կը բարձրանայ պատ մը երեք , չորս մէգր կամ ևս աւելի կամ նուազ րարձրութեամբ . կը թողուն ապա ամի կամ երկու աղէկ մը արև ծծելու և շրնալու համար : Ծածկեն աւելի դը- ժուար է քան թէ պատերն քաշել . ան- շուշտ այս գժուարութիւնը կ'ուղէ ցուց- նել Շիրակացին՝ երբ ամրող տուն մը շնելու համար տուն քունել կ'ըսէ , և քունել բայն ըստ տեղոյն բարբառոյ կը գործածուի շէնք ծածկելու իմաստով :

Արդէն կանխաւ բամբակածորէն և ՚ի կուայ Շիրակացին կը հաւաքէ իր տան յարկին ատաղձ գերանները , մարդակ- ներ , ճեական , և այլն . և արդ կը մնայ զանոնք անվնաս և ճարտարութեամբ հանել պարսպաց վրայ և իրարու վրայ շարերով աւելի բարձրացնել քան զա- տերուն բարձրութիւնը : Գերաններ պատերուն ձևոց համեմատ քառակու- սի կը շարեն՝ միջակէտն միշտ պարապ ձգերով , և գերանաց ծայրերը միշտ ան- կիւնաձև զիրար կը գրկեն , և իրենց հաստութեան պատճառաւ զիրար չեն համբուրեր , այլ մանաւանդ կէս մէջը և աւելի ալ միջոց կը ձգեն՝ զորս լեցը- նել մարդակաց պաշտօնն է . ապա պա- րապ միջոցք կը լեցուին մարդակներով ըստ կարելոյն խիտ առ խիտ , և մար- դակաց վրայ կը զիրզուին ճեակեան ը- ստած կտաւատէն ելած խծուծն , կամ թէ առ ՚ի չգոյէ ճեականին՝ երիշնակ , գունչօն , լրտափուշ , և ասոնց նման հաստ և բարակ փշերով , այնպէս որ հե- ռուէն ըլրաձև գէզ մը կ'երենայ . այսու հանդերձ գեռ տունը չէ լնցած , կամ թէ ճիշդն ըսերով՝ զեռ բնակելի չէ . Վասն զի չորս կողմէն հիմնագրութեան ատեն հանած հողերն ներս տունը 8 մէջը բարձրութենէ գեսնէն դէպ ՚ի տանիքի վրայ ձգեն թիերով՝ բաւա- կան կտրճութեան մը ասպարէզ է , և տանը նաւակատեաց աւետարեր կա- րապեան . Զայն կ'ելլայ հրաւիրանաց տանտիրով կողմանէ առ համշիրակ և քաջարազուկ և կորսին երիտասարդու գալ ՚ի հանդէս նադրաձորբեան , այս- պէս կոչեմ զհանդէսն տեղացւոց հա-

յեցի բառն մոռնալուս համար : Ուրախ զուարթ կը հաւաքուին նորայէն տունը ամէնմէկն իր բազկաց վարժած և կըր- թած թիակներով , կէս մը քաջութեան ասպարէզ զեմացնին ելլելուն համար , մեծ կէս մ'ալ հերիսայի պուտուկին և եռանդաբորբոք օղիինգաւալթաց սիրոյն համար : Դեռ ամբողջապէս չհաւա- քուած՝ ամէնքը փորձ կ'ընեն յաջող տեղ մը գտնապու՝ կէս մեղր լայն քա- ռակուսի ծակէն , որ թողուած է տանը տանիքի վրայ պատուհանաց՝ տեղ՝ հողը իր արագասահ թիսլ տանիքի վրայ հոսելու : կը հաւաքուին ամէն հրաւի- րեակը . ձայն կը տրուի սկսելոյ՝ Օրհնեեալ է Աւտուան . կը պատասխանուի ամէն : Զկարծուած երագութեամբ՝ մը հողոյ գետ մը զէպ ՚ի երկինք կը գիմէ . եթէ այդ ըլլար պիտի արեւը չտեսնայինք . թերեւս այս պատճառաւ այս հանդէս միշտ գիշեր ասեն կը կատարուի ՚ի լոյս ճրագագ : Հողոյն շատութեան կամ քի- չութեան համեմատ ժամէն կամ կէս ժամէն՝ մեծազնագուած դէզ մը գիտնէն երգիքի ՚ի վրայ կը տեսնուի . և երիտա- սարդք վերջին մնացորդն հոսելով զէպ ՚ի վիք՝ կ'աւարտեն , զիմստուած օրհնե- լով և տանտիրոյն շատ բարի մազդե- լով :

Վաստակոց հանդէսն գոցուի և վա- յելիցն բացուի . սեղան կը կազմուի մե- ծահաց , որով լիացած յօժարակամ վաստակաւորք ՚ի կէս գիշերի տուներ- նին դունան օրհնելով զտանտէրն , զտուն և անմիիւ ամաց յաջորդութիւն մը մազդելով բնակչաց :

Միւս օր տանտէրն կ'ելլայ տանիքին վրայ՝ հօն զիկուած հողը հաւասարելու ամէն տեղ , և այն գրեթէ երեք մէզը բարձրացած հողի վրայ մէզը մ'ալ աիզմ ծեփիլու , որպէս զի գալի ան- ձրեն իբրի ապալեր լերան մը վրայէն սահի անցնի առանց ներս թափանցե- լու . անձրէի թափանցելն կ'արգելուի , բայց ուրիշ մեծ վտանգի դուռ . մը կը

1 Եւրէւսա աեղուցն կը նշանակէ երեւմ պարզ տանը վրայ բացուած պատուհան , և երբեմ բոլոր տանը վրան :

կը բացուի : Պատերու կազմուածն շատ անդամ բաւական չըլլար ահազին գերաններ, մեծադէջ հողն և տիգմն ընդերկար վեր բռնելու, ուսկից վկասուց մեծութիւնը գուշակելու է . բայց ասոր ալ ճարը մատածուած է . իւրաքանչիւր ստորակարգ զյուգ գերանաց դիրար շաշփելու կէտին տակը՝ գերանին հաստութեամբ միւն մը կը կանգնուի, եթէ վտանգն ամենահաւանական է՝ ձագով սիւներ | կը դրուին վտանգալից գերանաց տակ :

Շիրակացւոյն տուներն բուն ստորաբաժնում՝ չունին և ոչ վերնայարկ . այլ միայն պատիկ խուցի մը մեծութեամբ անկիւններ, վերնայարկին տեղն ալ ներքնայարկ, և արտաքին գաւիթն, որ ըստ տեղացւոյ բարբառոյ սրախ (սրահ) և բակ կոչուի, որուն մէջ զետեղուին մերձաւորապէս կամ աւելի գործածական երկրագործութեան գործիներ, և ամառան ատեն ալ իրենց զովարար հովանոցն է : Զմեռն տխուր է այս զաւթաց տեսարանն : ինչպէս յիշուած է՝ թոնիրն տանը մէջ տեղ երդիքին ուղղութեան տակ թաղուած է, և ասոր ակն դէպ 'ի տանը դուռն հայի : Երբ ձմեռ է սաստիկ' բակերն խիստ խոնաւ վիճակի մէջ կը գտնուին, մինչև յարկը ծածկող գերաներէ սառոցներ տեսակ տեսակ ձևերով կախուին՝ կատարեալ հանոյ աշաց նայելց . բայց երբ տանը տաքրութեամբ, երբեմն ալ ախոռին՝ (եթէ տանը մօտ շինուած է) սատերը կը հային և կը ծորեն վար, իրիկուան դէմն սառուցազարդ է ոչ միայն չէնքին յարկն՝ այլ և յասակն :

Տունէն ետև կուգայ օտան, որ թէպէտ և ամէն գեղացուն համար չէ, բայց կարեոր համարուած է, և տանը բուն էական և լրացուցիչ մասն է . որովհետև տունը օրուան մեծ մասը բրոնուած է, և տակնուվրայ հաց եփելուն պատճառաւ և կերակրոց համար . տեղ

մը պէտք է մարդկան և տղայոց համար թէ գործելու և թէ 'ի զրօսանս անցնելու : Օտային ձևն երկային է . վերին մասին պատին մէջ կայ վառարան (օճախ) իր ծխնելցող քարէ աշտարակածն իուղովակովն . վերնայարկին կամսարածն է, և վառարանին երկողման ուղղութեամբ կէս մէդր բարձր պատեր շարուին տքայ անուամբ . որո՞ք ապա խսրապսատ, թաղիքապատե գորգապատ նստարաներ կ'ըլլան՝ տիրոջն կամ բնակչաց համեմատ : Օտաներու ներքնակողմն շատ հեռու չէ սովորական սենեկաց ներքնակողմէն, բայց տանը ներքնակողմն կամ իր բնական պատերու դիրքը կը պահէ, կամ հաստ սպիտականման ծեփ մը կու տան, որուն պըշադիկ կ'ըսեն : Ձմեռն՝ ամենակարեոր է այսպիսի տեղ մը ի զրազմանց զուրկ գեղացիները զրազեցնելու համար . ընդհանրապէս ծոխք և միջակ բարեկեցիկ ընտանիք օտայով կ'իմացուին . շունեցողաց բնական իրաւունք է թաղին գլխաւոր օտան կամ թէ գրացւոյն՝ երթալ . որ կը հաւաքուին ձմեռուան երկային իրիկունները կարճեցնելու : Գրլիսաւոր զրազանքնին է անցեալ լիութեան կամ պակասութեան վրայ խորհրդագան և ապադային յուսով միսիթարուիլ, տաւրեառից վրայ խօսակցիլ, երբեմն կատարել ալ, երբեմն բարոյական կարեսր տուրեառի մը զալունի որսորդութիւն քան թէ մտածութիւն երկու ընտանեաց մէջ . շատ անգամ տեսակ տեսակ տեղական խաղեր, արեւելեան առասպելաշատ պատմութեանց հանդիսացումն . և այնպիսի լիացութին բերբանով կը պատմեն որ կարծես թէ ականատես են . և իրգք ալ երբեմն երեկայոտ և դիւրահաւան զիլսոյն մէջ աշօք տեսած և իրական դէպք կ'ըլլան : Բայց շատ գեղերու մէջ զեղերեցք բարեպաշտ հոդատարութեամբ մը ե երկիւղած մտածութեամբ ջանացեր են չթողլու բոլորովին փճախօսութեամբ անցնել, և սովորութիւն մոռուցեր են օտաներու մէջ կարդալ, աշխարհարառ սրբոց վարք սուրբ գիրք, Հայոց

1 Զագու սին կոչուի սիւն որ անբաւական ըլլար տոկու վրայի բեռան տակ . իր երկու կողմէն հարկ կ'ըլլայ երկու պատի միւներ ալ դնել, երեքին մէկ խարիսխ և բարձ ատլով :

պատմութիւն և ասոնց նմաններ, որոց համար մասնաւոր տիրացուներ սահմանուած են . այս խրատական օրէնքն՝ 'ի մեծ պահս պարտաւորիչ օրէնք կ'ըլլայ : Ալսոն կամ թաւլա նոյն կերպով կը շինուին, բայց ձեռվ երկայն են և երկու նեղ լրւամնւառ ունին երկու կողմէ բացած :

Արդի շերակարնակ ժողովրդեան զգեստուց տարազն մանր դիտելով աղջային հնասէրն և հնախօսն, կարծեմ թէ պիտի շատ շրուաւորուի յայսմմասին պատմութեան ստուերախառն ձըգած կէտէրու մէջ . բայց և հայ ճաշակէն օտար բան մը շի տեսնար : Երեք տեսակ զգեստ կայ էրիկ մարդկանց 'ի շերակ . հնասէր ծերունեաց՝ լայն, պճղնաւոր դօտնորեալ պատմուճանն . յիսնամեայ մարդկանց լայն, գօտեռեալ՝ բայց կարճ բանկնաձև պատմուճան, և նորահասից Ռուսաց և թերես աւելի վլրաց նմանութեամբ ձեսաւորուած արխալուսին, որոնց կտրելն և կարելն կանաց գործ է : Տարատն ընդհանուր պարսկատարազ է . երեք տեսակ գրլիսարկ ունին փափասադ, արախէմի, չամչուկ . իսկ քլորոն որ տաճկական փոշչի կոչուած լաթերով պատատած դիխարէն է . հին ծերունիք միայն կը գործածեն . փափալն ովխարի մորթէ շինած ծանօթ գլխարկն է 'ի Ռուսաստան և աւելի 'ի Վրաստան, ուսկէց տարածուած է և 'ի Հայս . որուն ընտիրն ինչուան 48, 80, 200 ֆուանք կարժէ (12, 20, 50 մանէթ) . իսկ սովորականքն 8, 16, 20 ֆուանք գին ունին : Արախէմին թեթև կասաւէ բայց փառն գործուած դոյն զգոյն թելերով գտակն է, իսկ չամչուկն պարզ թելէ գործուած է առաջնոյն պէս . որոնք փաստակոց ատեն աւելի գործածական են . Զմեռն աւելի պատսպարուելու համար զգեստուց մէջ բամբակ կամ բորդ կը դնեն . բայց ունին և իրենց վերաբկուներ . կապայ և եափունձա . մէկը հաստ իրենց ձեռքով գործուած բրդէ չուփայէ կը շինուի լայն թէներով . միւսն թաղիքէ կը շինուի 'ի Ռուսաստան՝ փիլռնի նը-

ման . Ներաը թաղիք է պարզ, դուրսը սե բրդով գեղեցիկ ծոպածեսած . ասոնք են ձմեռուան ամուր ապաւէն, մանաւանդ ճամբորդութեան մէջ : Միով բանիւ՝ ներակացւոց տարազոն մէջ, մանաւանդ կանանց զգեստուց, երեք աղդաց ազդեցութիւն կայ, Փարսիկ՝ ծանիկ և Ռուսու կամ եւրոպացի . գժուար չէ գուշակելն թէ որն աւելի տիրող է կամ պիտի ըլլայ :

Բայց կանանց տարազու վրայ խօսելն առաջ, կարդէ գուրս չէ քիչ խօսքով յիշել իրենց ընտանեկան գլխաւոր և մասնաւոր կենաց զրացմունքները : Բնտանեաց ներքին կացութիւնը գրեթէ կնոյն ձեռքն է . վայեկից լիակատար մստակարար է . տանը հացագործն է, խոհարար, գերձակ և երբեմն ալ բրուտ . որդւոցը ապագայ կենաց սահմանը, ըստ հին ոճոյն, մայրն իշխան է ըստ կամն գծելու, շատ անդամ ընդդէմ կամաց և յանզգաստից հօր : Որդւոց ամուսնութեան համար ծնողաց հաւանութեան մէջ որ ծայրայեղ է յԱրեւելս, աւելի յաղթող է և գործոն մօրը հաւանութիւնն, Եթէ քաղաքականացեալ աշխարհիս մէջ դաստիարակաց ընդհանուր և անհրաժեշտ պահանջն է մայրենի գաստիարակութեան կանխութիւնն, շիրակարենակ և բոլոր իսկ Հայաստանեաց համար դաստիարակութեան ամբողջութիւնը մօրէն յուսալու է : Հայրն պարապելու ժամանակ չունի, որով և ոչ որդւոց բարձրագոյն պիտոյքը տեսնալու, ճանշալու և հոգալու . և երբեմն ալ եթէ սկսի մոածել մէկէն տիսուր գիտութեամբ մը կիմանայ թէ իր ասպարէզին մէջ զաստիարակութեան միջոցներ ոչ միայն չկան՝ այլ և անկարելի են : Ոչ միայն արտաքին կարելի եղած դաստիարակութիւնն մօրը ձեռքն է, այլ և ներքինն, որ են կրօնից նախնական և էական ծանօթութիւններն և պարտքերն . արդէն իսկ դաստիարակել ըստ բուն և ճշմարիտ մտաց՝ է քրիստոնէութեան պահանջած քրիստոնեայն պատրաստել :

իսկ նիւթական կենաց հոգեպահիկը ճարելու համար, կինը եթէ ոչ յամենայնի և ամէն ատեն՝ գոնէ շատ բաներու մէջ հաւասար կողակցին կ'այխատի. Երբ երկու կողակիցք միայն են՝ մին կը զերանդէ՝ միւսն փոցիսէ. իսկ եթէ մի և նոյն տանը մէջ բավարարիւք են աշխատողք՝ աւտնին գործերը բոլոր կանանց վրայ է, մանաւանդ յամարայնի, որ ատեն արք գրեթէ թռչնոյ պէս շարունակեալ 4-5 ամիս դուրս կը բնակին.

Եթէ արեելցոց այրական տարազին պարկեշտութիւնն և չափաւորութիւնն գովուած է 'ի հնոց և 'ի նորոց, ևս առաւել կանանց տարազուն համեստութիւնն : Իրաւ հիմա չկան՝ ոչ 'ի Շիրակ և ոչ 'ի բոլոր Հայաստան դաշնաց թրղթոյն յիշած բազու և պատկան յակունդեայս . . . բանուանդու բիշրական և վարսակալս վայելլափառ . . . Դուշենս դաղմառական . . . և ոչ բուզանդայ յիշած զարմանալի բազ, պատմուան և վառն Զարմանդխտոյ ար-

ժանավայել և ընդելական . . սակայն անպակաս են ոսկի, արծաթ կամարներ՝ առն և կնոջ, ճոխ քայռամաննեակներ (բռդ կամ բոկմալ), վղնոցներ հարուստ ականակուու խաչով կամ խաչերով, փառաւոր ափարանջանք՝ ոսկի և արծաթ. ոսկիք 'ի ճակատուն շար 'ի շար, ականջօղքը 'ի միոնէն 'ի միւսն ձգեակք 'ի կախուու նազարդ. գտակաձև պնակ ոսկի, կամ արծաթի և պղնձի ալ երբեմն զիխու վրայ յարմարցուցած, որուն կոյուղ անուն կու տան, որ զարդուց և պիերձնաց աշտարակ մը կը պատրաստէ զարդարուողին զլուխը. որուն վրայէն հասակաչչուի ուռճացած մազերու մանրահիսա ողորք մը սեացուցանէ կամ յոսկի ներկէ զկարմիր շատ անգամ և զիսխոտ գեղնագոյն պերճանաց հանդերձին թիկունքը. և այս հիւածի ծայրին հաստատուի արծաթի զարդով մը, որուն պաշտօնն է մազերու ամէն մէկ հիւսուածը մի և նոյն ուղղութեան վրայ պահելու :

Կը շարունակուի:

## ԱՐՄ. ԳԵՂԵՑՔԻԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

Ա. Յ. ՊԱՐՐԻԿԵԱՑ

### ԳԼՈՒԽ Ը.

Ստորեկրեայ ծայնը.

Երբ Շամիրամ մեկնեցաւ խրամաճանութեան սրահէն, Հայոց թագաւորն արարողապետին առաջնորդութեամբ և պատանեաց ընկերակացնութեամբ, որոնք ձեռքերնին մէյմէկ չափու առած կը լուսաւորէին ճամբան, զնաց իր բնակարանը, որ արքունեաց հեռագոյն թեւոյն վրայ կ'ընկնար, և սահմանուած էր այն ամեն թագազարմայցելուաց որ կու գոյին 'ի բաբելոն :

Երբ հօն հասաւ պատանին, խնդրեց որ առանձին թողուի, հրաժարելով ծառայից

սպասահարկութենէն, որոնք իր ակնարկութեանցը կը սպասէին, Պէտք էր որ ինքն իրեն ամփոփուէր ու կարգի դնէր մատոյզ խորհուրդները, մանաւանդ յետ այնչափ զանազան տարօրինակ պատահարաց, իր բարելոն հասնիլը, Միկդդայ Զարսանիկայ մեծեանը, գեղանի անծանօթն որուն հետ կասպուեցաւ սրբազան երդմամբ, սիկինն զոր քիչ առաջ տեսաւ արբայրական պատումաննաւ, լուսաւորութիւնն, խրամիճանութիւնն ու կերակրոց սուատութիւնն, ասոնք ամենին ալ զիշտցնելով ու ինքն իրմէ գուրս հանելով զպատանին, մթագներ ու տարակուսանօք լիցուցեր էին միտքը, և միանգամայն այն-